

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 6-ի **ՀՕ-16** օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածից հանել «, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից» բառերը:

Հոդված 2.

1. Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետում «ծագունով հայ» բառերը փոխարինել «ազգությամբ հայ» բառերով:

Հոդված 3.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:»:

Հոդված 4.

1. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գործունակ, օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքով բնակվող (գտնվող)» բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը:

3. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս՝

«Առանց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայ անձը:»:

Հոդված 5.

Օրենքի 14-րդ հոդվածում «4-րդ» թիվը փոխարինել «7-րդ» թվով, իսկ «և եթե նա չի գրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից:» բառերը փոխարինել «և եթե նրա քաղաքացիությունը չի դադարեցվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:» բառերով:

Հոդված 6.

Օրենքի 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«ԵՐԵՒԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԿԱՄ ԵՐԵՒԱՅԻ ՈՐԴԵՂՐԱՄԱՆ ԴԵՊԵՐՏՈՒՄ:»:

Հոդված 7.

Օրենքի 16-րդ և 17-րդ հոդվածները շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 16. ԵՐԵՆԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած ծնողների երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա:

Սույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում 14-18 տարեկան երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար տալիս է գրավոր համաձայնություն:

ՀՈՂՎԱԾ 17. ԵՐԵՆԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած ծնողների երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն:

Եթե ծնողներից մեկը կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, իսկ մյուսը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, նրանց երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում 14-18 տարեկան երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը իր գրավոր համաձայնության առակայության դեպքում, **եթե չունի պետության հանդեպ չկատարված՝ «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտավորություններ:**»:

Հոդված 8.

Ուժը կորցրած ճանաչել օրենքի 22-րդ և 25-րդ հոդվածները:

Հոդված 9.

Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՑՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում.
- 2) կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում.
- 3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով:»:

Հոդված 10.

Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

- «4) նա ունի պետության հանդեպ չկատարված պարտավորություններ:»:

Հողված 11. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը տարածվում է նաև այն անձանց նկատմամբ, որոնց ծնողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք են բերել մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«ԱԺ կողմից 2011 թվականի սեպտեմբերի 14-ին առաջին ընթերցմամբ ընդունված «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների մասին

ՀՀ	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, մասը	Առաջարկությունը	Եզրակացությունը
1.	2.	3.	4.	5.
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 3-րդ, մաս 2-րդ	1. «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասում՝ նախագծով սահմանվող արտոնությունը նախատեսել միայն ազգությամբ հայերի համար:	<p>1. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է, որով ուժը կորցրած է ճանաչվում գործող օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը:</p> <p>Հոդվածը լրացվել է նոր մասով, որը հիշյալ արտոնությունը կտարածի միայն ազգությամբ հայերի նկատմամբ:</p>
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 6 (ներկայիս նախագծի 7-րդ հոդված)	1. Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 17-րդ հոդվածի 3-րդ մասում հստակ թվարկել պետության հանդեպ չկատարված պարտավորությունները:	1. Առաջարկությունն ընդունվել է: Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 17-րդ հոդվածի 3-րդ մասում նշվել է պետության հանդեպ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտավորության մասին:
3.	ՀՀ կառավարություն		1. Գործող օրենքի 5-րդ հոդվածը ևս առաջարկվում է համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրությանը՝ մասնավորապես 30.1. հոդվածի 3-րդ մասին:	1. Առաջարկությունն ընդունվել է: Օրինագծում լրացվել է նոր՝ 3-րդ հոդված, որով նոր խմբագրությամբ է շարադրվում գործող օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը:

4.	<p>ՀՀ Աժ պատգամավորներ Արմեն Մարտիրոսյան Զարուհի Փոստանջյան</p>	<p>1. Հոդված 3-րդ, մաս 2-րդ (ներկայիս նախագծի 4-րդ հոդված)</p> <p>2. Հոդված 3-րդ (ներկայիս նախագծի 4-րդ հոդված)</p> <p>3. Հոդված 10-րդ (ներկայիս նախագծի 11-րդ հոդված)</p> <p>4. Հոդված 1-ին</p>	<p>1. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) Ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը (հայերեն կամ որևէ օտար լեզվով, որոնց ցանկը և թեստավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը):»</p> <p>2. Նախագծի 3-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝ շարադրելով հետևյալ խմբագրությամբ. «3. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) որը ազգությամբ հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ, ընդունում է իր պատկանելությունը հայ էթնոսին, ինքնությանը, պատմությանը, լեզվին, մշակույթին, ավանդույթներին ու ժառանգությանը,»:</p> <p>3. «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:»:</p> <p>4. Օրենքի թիվը՝ «ՀՕ-16-Ն» փոխարինել «ՀՕ-16» թվով:</p>	<p>1. Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, հետևաբար ՀՀ տարածքում օտար լեզվով վարչարարություն չի կարող իրականացվել: Իսկ ՀՀ Սահմանադրության և հայոց լեզվի իմացության ստուգման կարգն արդեն իսկ սահմանված է ՀՀ կառավարության 30.08.07թ. թիվ 1040-Ն որոշմամբ:</p> <p>2. Առաջարկությունը չի ընդունվել: Հայ էթնոսին, ինքնությանը, պատմությանը, լեզվին, մշակույթին, ավանդույթներին ու ժառանգությանն անձի պատկանելությունն ընդունելու հանգամանքը իրավակիրառման ընթացքում հնարավոր չէ պարզել: Ինչ վերաբերում է ազգությանը, ապա ՀՀ կառավարության 23.11.2007թ. թիվ 1390-Ն որոշմամբ նախատեսված են հայկական ծագումը հավաստող փաստաթղթերը:</p> <p>3. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 11-րդ հոդվածը խմբագրվել է, ըստ որի՝ օրենքն ուժի մեջ կմտնի 2012 թվականի հունվարի 1-ից:</p> <p>4. Առաջարկությունն ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածում ՀՕ-16-Ն թիվը փոխարինվել է ՀՕ-16 թվով:</p>
----	--	--	---	---

5. Հողված 5-րդ
(ներկայիս նախագծի
6-րդ հողված)

5. Նախագծի 5-րդ հողվածից հանել
«ԿԱՄ ՔԱԴԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՄԱՆ» բառերը, քանի որ
սույն նախագծի 8-րդ հողվածով
(ներկայիս նախագծի 9-րդ հողված)
նախատեսվում է օրենքի 23-րդ
հողվածի 1-ին մասը շարադրել
«Հայաստանի Հանրապետության
քաղաքացիությունը դադարեցվում է
քաղաքացիությունը փոխելու
դեպքում»:

5. Առաջարկությունն ընդունվել է:
Նշված բառերը հանվել են: